

## Հարցաշար

հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի

11-րդ դասարան

Տևողությունը 150 րոպե

Դարերի խորքից հպարտ ու արժանապատիվ քայլվածքով ահա դեպի մեզ է գալիս համառ ու անընկճելի մի ճամփորդ:

- Ո՞վ ես դու, ճամփորդ:

- Հայկ դյուցազունն եմ ես, որ նախընտրեցի թողնել իմ բարեբեր դրախտավայրը և ապրել չոր ժայռերի վրա, միայն թե անկախ լինեմ և ազատ:

Մեսրոպ Մաշտոցն եմ, որ երեսունվեց տառ կտակեցի իմ ժողովրդին, որին մահ չկա, քանի դեռ նա հեգում է այդ տառերը:

Խորենացին եմ, որ հայոց պատմության վաղնջական ժամանակներից եկող հորդահոս գետը դրեցի հունի մեջ, որ նա, հավերժ հոսելով, խոսի մեր փոքրաթիվ ժողովրդի մեծ սխրանքների մասին:

Տրդատ ու Մանվել է անունս: Հայոց երկնամուխ լեռների կատարներին վեր խոյացող կոթողների ճարտարապետն ու շինարարն եմ ես: Գառնին եմ, Զվարթնոցը՝ իմ հողի վրա քարե անջնջելի ստորագրություն ու կնիք դնողը:

Նարեկացին եմ՝ հայոց լեռներից ժայթքած բանաստեղծական այն ամեհի հրաբուխը, որ իր դղրդոցով դարեր է սասանում:

Միջնադարի մռայլ երկնակամարը լուսավորած աշխարհիկ տաղերգուների աստղաբույլն եմ, երիտասարդ և ալեհեր գրիչն ու ծաղկողը, որ խնկաբույր վանքերի խցերում՝ մոմի լույսի տակ մատյաններ էր արտագրում՝ զարդարելով դրանք երփնավառ ծաղկանախշերով:

Աբովյանն եմ ես, որ երկրիս վերքը երգ դարձրի և անհետացա աղջամուղջում, որ չկորչի իմ քաջ Ադասու ցեղը:

Հայոց անաղարտ երգի հավերժական զանգահարն եմ՝ Կոմիտասը: Ես էի, որ մաքրեցի հայոց երգն ու մեղեդին օտար տիղմից և այն լսելի դարձրի արար աշխարհին:

Թումանյանն եմ ...

1. Շարունակի՛ր բնագրի անավարտ թողած միտքը 2-3 նախադասությամբ՝ պահպանելով տեքստի ոճական շարադրանքը: (1, 5 միավոր)
2. Տեքստից դուրս գրի՛ր անկանոն և պակասավոր հինգ բայ: (0,5 միավոր)
3. Փոխակերպի՛ր *Հայոց երկնամուխ լեռների կատարներին վեր խոյացած կոթողների ճարտարապետն ու շինարարն եմ ես* նախադասությունը՝ նշելով երկրորդական նախադասության բնույթը: (1 միավոր)
4. Գրի՛ր «դանայան տակառ» թևավոր խոսքին համարժեք մեկ այլ թևավոր խոսք և մեկնաբանի՛ր: (1 միավոր)
5. Տեքստից դուրս գրի՛ր փոխաբերական իմաստ արտահայտող երկու նախադասություն: (1 միավոր)
6. Գրի՛ր շարադրություն «Երազանքների իմ մոլորակը» վերնագրով: (5 միավոր)